տարագ չանէ և մի ամիս փիլոնով արտաքոյ եկեղեցոյն կանգնի և ապա ի ներս մտանէ։

Դշի օրս (23 Յ--Լ-) թագաւորն թէպտիլ դուրս եկաւ զբաղում տեղիս։ Յաւուրս յայսոսիկ լու եղեւ թէ Ֆռէնկն զՄիտիլի կղզոյն Ա. Բ գիւղն էառ և զեկեալ նաւքն անդ արգիլէ ասելով. Թէ տաք մաքս՝ թողում զձեզ մտանել ի Բիւզանդ եւ թէ ոչ՝ զձեզ կոտորելոց եմ եւ զգանձս ձեր առնելոց եմ։ Եւ աւուրքս եկին Դ Դ նաւ անտի, տեսեալ նաւի գլուխ Բ Ճ զուռուշ եւ ապա անցեալ, եւ էր բրինձ եւ սապոն. քանզի մի ամսոյ մէջն որ ԺԵ ըստակ էր սապոնն և այժմ ԼԶ եղև, և երբ եկին[1]) նաւքս՝ ԻԸ եղև։

Դարձեալ լու եղեւ՝ թէ ի յԱրզրում Ղըզըլպաշի դեսպան եկեալ էր, և Զուռնազանն որ էր նորա տիրող, դիմամարտի ընդ նոսա թէ Դուք դեսպանի ձեւով եկեալ էք և կամիք առնուլ զբերդս, և զմիմեանս կոտորեալ են։ Դարձեալ կարաւան եկն և բազում փորձանս կրեալ յաւազակաց սարուճախց, որ ի հետ կարաւանիս զատին Պաղտատայ էր, զնոսա բազումս չարչարեալ, եւ զատին արամբքն[2]) դիմամարտի ընդ նոսա՝ զմիմեանս հարեալ, եւ զատին փախեալ ելանէ ի լեառն եւ կարաւան մնայ ի դաշտն եւ յետոյ գան աւազակքն եւ առնեն ինչս կարաւանէն եւ գնան, եւ յառաջմանէ պատուիրեն կարաւանին, ձայնելով ընդ նոսա. Զլինի դուք վախէք կամ ձեռք վերցնէք, մեք բանն ի զատուն հետ է։

Եշի օրս (24 Յ--Լ-) եկն Պարսամ Զէլէպին եւ Սոճա Ռուհիճանն։

Ուրբաթ օրս (25 Յ--Լ-)։ Երեկոյիս բերեալ Դ մարդ ի զնտանէն զգլուխքն հատին ի Թահտաղալան եւ ի Պարմաղափուն եւ ի Սառաճխանան։ Մունեթիկն

1) եկաւ. 2) արամքն.